



հայկական պողպատածուլական ձեռնարկություն „ԱՍԿԵ գրուպ“ ԲԲԸ
армянское сталелитейное предприятие „АСКЕ груп“ ОАО
armenian steel casting enterprise „ASCE group“ OJSC

89101

11 օգոստոս 2021թ.

Էական փաստեր և տեղեկություններ ներառող փաստաթուղթ

Ղեկավարվելով <<Արժեթղթերի շուկայի մասին>> ՀՀ Օրենքի 127 հոդվածի պահանջներով, կից ներկայացվում են <<ԱՍԿԵ ԳՐՈՒՊ>> ԲԲ Ընկերության, որպես հաշվետու թողարկողի, էական փաստերը և տեղեկությունները:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ վկայակոչված էական փաստերը և տեղեկությունները հրապարակվել են ընկերության պաշտոնական էլեկտրոնային կայքում՝ www.asce.am:

Առդիր՝ 2 թերթ:

Տնօրեն՝ 


Խ. Անտոնյան

«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ»
բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն)
տնօրենների խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ)
ՈՐՈՇՈՒՄ թիվ 9

(Կազմված է «09» օգոստոսի 2021 թ.-ին և բաղկացած է 2 (երկու) թերթից)

Ժողովի անցկացման վայր՝ ՀՀ, ք. Չարենցավան, Երևանյան 2
Ժողովի անցկացման տարի, ամիս, ամսաթիվ՝ 2021 թվականի օգոստոսի 9
Ժողովի սկիզբ՝ ժամը 11:00

Խորհրդի նիստին ներկա էին՝

- 1) Միխայիլ Հարությունյանը՝ խորհրդի նախագահ
- 2) Խաչատուր Անտոնյանը՝ խորհրդի անդամ
- 3) Վազգեն Նիկոլյանը՝ խորհրդի անդամ
- 4) Դավիթ Յավրույանը՝ խորհրդի անդամ

**ՀՀ օրենսդրությամբ և «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲ ընկերության կանոնադրության համաձայն՝
քվորումն ապահովված էր, խորհրդի նիստն իրավասու էր:**

ՕՐԱԿԱՐԳ՝

Ընկերության

Ձեկուցող՝ Խաչատուր Անտոնյան

ՔՆՆԱՐԿՎԵՑ՝

Օրակագում ընդգրկված հարցեր

1. Ի ապահովումն «Արդշինբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Բանկ) և «Միկշին» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 01561878) միջև 2021 թվականի հունիսի 11-ին կնքված թիվ ԲՎՊ21/23-47 վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման միջոց Բանկում սպասարկվող Ընկերությանը պատկանող 2470075311370000 հաշվեհամարին առկա դրամական միջոցների և դրանց նկատմամբ պահանջի իրավունքը՝ 15,000,000,000 ՀՀ դրամ գումարի չափով, արգելադրման կիրառմամբ, գրավադրելու հարցը:

2. Ի ապահովումն Բանկի և «Միկշին» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի հունիսի 11-ին կնքված թիվ ԲՎՊ21/22-47 վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման միջոց Բանկում սպասարկվող Ընկերությանը պատկանող 2470075311370010 հաշվին առկա դրամական միջոցների և դրանց նկատմամբ պահանջի իրավունքը՝ 15,000,000 ԱՄՆ դոլար գումարի չափով՝ արգելադրման կիրառմամբ, գրավադրելու հարցը:

Հարցը դրվեց քվեարկության՝

Միխայիլ Հարությունյանը՝ խորհրդի նախագահ

ԿՈՂՄ

Խաչատուր Անտոնյանը՝ խորհրդի անդամ

ԿՈՂՄ

Վազգեն Նիկոլյանը՝ խորհրդի անդամ

ԿՈՂՄ

Դավիթ Յավրույանը՝ խորհրդի անդամ

ԿՈՂՄ

Ընդամենը՝ կողմ՝ 4, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, չի մասնակցել՝ 0

ՈՐՈՇՎԵՑ՝

- 1) Համաձայնություն տալ ի ապահովումն Բանկի և «Միկշին» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի հունիսի 11-ին կնքված թիվ ԲՎՊ21/23-47 վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման միջոց Բանկում սպասարկվող Ընկերությանը պատկանող 2470075311370000 հաշվեհամարին առկա դրամական միջոցների և դրանց նկատմամբ պահանջի իրավունքի՝ 15,000,000,000 ՀՀ դրամ գումարի չափով, արգելադրման կիրառմամբ, գրավի գործարքի կնքմանը:
- 2) Համաձայնություն տալ ի ապահովումն Բանկի և «Միկշին» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի հունիսի 11-ին կնքված թիվ ԲՎՊ21/22-47 վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման միջոց Ընկերությանը պատկանող 2470075311370010 հաշվին առկա դրամական միջոցների և դրանց նկատմամբ պահանջի իրավունքի՝ 15,000,000 ԱՄՆ դոլար գումարի չափով, արգելադրման կիրառմամբ, գրավի գործարքի կնքմանը:
- 3) Համաձայնություն տալ Ընկերության անունից կնքված և կնքվելիք պայմանագրերից և/կամ համաձայնագրերից բխող վեճերի դեպքում՝ վեճերի լուծումը հանձնել Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության դատարաններին, «Օպտիմուս Լեքս» ՍՊԸ-ում մշտապես գործող արբիտրաժային դատարանին, Հայաստանի Բանկերի Միության «Ֆինանսական արբիտրաժ» դատարանին կամ «Կրեդիտ Կոմպրոմիս» ՓԲԸ-ում մշտապես գործող արբիտրաժային դատարանին՝ Ընկերության անունից պայմանագրերը և համաձայնագրերը կնքող անձի ընտրությամբ:
- 4) Համաձայնություն տալ սույն որոշման հիման վրա կնքվելիք պայմանագրերը և համաձայնագրերը կնքել Բանկի կողմից առաջարկվող, Ընկերության անունից պայմանագրերը և համաձայնագրերը կնքող անձի համար ընդունելի ցանկացած պայմանով:
- 5) Հանձնարարել Ընկերության տնօրեն Խաչատուր Անտոնյանին՝ սահմանված կարգով իրականացնել սույն որոշմամբ սահմանված գործարքների կնքման և ձևակերպման համար անհրաժեշտ գործողությունները:
- 6) Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Միխայիլ Հարությունյանը՝ խորհրդի նախագահ

Խաչատուր Անտոնյանը՝ խորհրդի անդամ

Վազգեն Նիկոլյանը՝ խորհրդի անդամ

Դավիթ Յավրույանը՝ խորհրդի անդամ

